Արձանագրություն N 3
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ 09.09.2019թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Ն. Յարմալոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ 03.09.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացրած հարցման վերաբերյալ 05.09.2019թ.-ին տրամադրվել է տեղեկատվություն, որի համաձայն ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է և գնահատել բավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 10.09.2019թ.-ից մինչև 14.09.2019թ.:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Անգործության ժամկետի ավարտից հետո առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում և կնքել պայմանագիր:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան

_____ Ն. Յարմալոյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան